Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.7-Մ2-36 Գլխավոր մասնագետ(2025-11-24)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչություն | Ծրագրային և տեխնիկական ապահովման բաժին | Գլխավոր մասնագետ, (27-34.7-Մ2-36)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, ՀԱԷԿ տարածք:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է Նախարարությանը ենթակա պետական մարմինների տարածքային կառուցվածքային ստորաբաժանումների տեխնիկական և ծրագրային սպասարկման աշխատանքները.
2. իրականացնում է Նախարարությանը ենթակա պետական մարմինների աշխատողների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվող վերապատրաստման և որակավորման դասընթացներին համապատասխան աշխատողների մասնակցության կազմակերպչական աշխատանքները.
3. իրականացնում է իր իրավասության շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

Իրավունքները.

- Վարչության Բաժիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ նյութեր սահմանված խնդիրներին համապատասխան՝ տեխնիկական առաջադրանքների, տեխնիկական բնութագրերի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի մշակման (լրամշակման) համար.
- Նախարարությանը ենթակա պետական մարմինների տարածքային կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել և ստանալ համապատասխան տեղեկատվություն տեխնիկական և ծրագրային խնդիրների վերաբերյալ.
- մասնակցել Նախարարությանը ենթակա պետական մարմինների աշխատողների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվող վերապատրաստման և որակավորման դասընթացներին.

Պարտականությունները.

- ծրագրային ապահովման (փոփոխությունների)՝ տեխնիկական առաջադրանքին համապատասխանելու վերաբերյալ մշակել եզրակացություն, կատարել ծրագրային ապահովման (փոփոխությունների) թեստավորման (փորձարկման), կատարվող ծրագրային ապահովման նախագծերի արդյունքների ընդունման, ներդրման, ուսուցման աշխատանքները.
- լրամշակել և Բաժնի պետին ներկայացնել ծրագրային և տեխնիկական համակարգերի հայտնաբերված սխալների և համակարգերի թեստավորման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը.
- կազմել ծրագրային միջոցների, փոփոխությունների նկարագրման մեթոդական ուղեցույցները (օգտվողի ձեռնարկները).
- մշակել տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և համապատասխան հանձնարարականի առկայության դեպքում կատարել դրանց հետ կապված աշխատանքները.
- կատարել Նախարարությանը ենթակա պետական մարմինների տարածքային կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող ծրագրային ապահովման շահագործման աշխատանքները.
- Նախարարությանը ենթակա պետական մարմինների տարածքային կառուցվածքային ստորբաժանումներին մեթոդական աջակցություն տրամադրել ծրագրային ապահովման շահագործման ընթացքում ծագած հարցերի և խնդիրների վերաբերյալ.
- համագործակցել համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համակարգչային համակարգերի մ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցու